ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5^{բ}, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«09» 08 2013 թ.
No ՊՀ-1415

«Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն»
հասարակական կազմակերպության իրավաբան
պարոն Գ. Հայրապետյանին
(ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի սպասարկման ոլորտում ուսումնասիրություն չի իրականացրել և «Փարքինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության վերաբերյալ որոշում չի կայացրել: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտը մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում իրացման կամ ձեռքբերման ծավալների հիման վրա, իսկ Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը եվ չափանիշները սահմանելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ծավալի և դրանում տնտեսվարող սուբյեկտի բաժնի հաշվարկը կատարվում է Հանձնաժողովի կողմից տվյալ շուկայի ուսումնասիրությանը նախորդող որոշակի ժամանակահատվածի տվյալների հիման վրա, իսկ «Փարքինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը Ձեր գրության մեջ նշված շուկայում նոր է սկսել իր գործունեությունը, դեռևս իրացման կամ ձեռքբերման ծավալներ չունի, ուստի այդ շուկայում ուսումնասիրություն կատարելու համար անհրաժեշտ տվյալներ դեռևս առկա չեն:

Նախագահի պաշտոնակատար՝ Պ. Ղալթախչյան

Կատարող՝ Ս. Ասատուրյան
Հեռ՝ 545-677